

ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

«Ցնծասցէ աննձ իմ ի Տէր, զի զգեցոյց ինձ
հանդերձ փրկութեան եւ ուրախութեան,
իբրև փեսայի եւ ինձ պսակ,
եւ իբրև հարսն զարդու զարդարեաց զիս»։
(ԵՍԱՅԻ ԿԱ.)

Մարդկության պատմության սկզբնավորումից ի վեր Աստված ժամանակ առ ժամանակ իջել է Երկնային Աթոռից, փարվել և առաջնորդել մարդկությանն Իր սրբազան ճանապարհներով զանազան եղանակներով ու կերպով՝ երբեմն նշանների և երբեմն ուղղակի թանձրացյալ միջամտություններով։ Եվ այս տնօրինության կատարելությունն ու լրումը եղավ տիեզերքի Արարչի ու Տիրակալի մարդանալու խոնարհությունը, երբ Հայր Աստված, անճառելի սիրո թելադրանքով, Իր Միածին Որդուն պարգևեց մարդուն որպես անարատ և անապական զոհ, Ում արյան հեղումը «ի խնդիր մոլորեալ ոչխարին» դեպի երկիր միսիթարության և ուժավորության կոչեց շնորհաբաշխ Սուրբ Հոգուն՝ հաստատելով հարատաժամ շարունակվող Իր փրկական առաքելության իրավատեր Մի, Ընդհանրական, Առաքելական, Սուրբ Եկեղեցին։ Եվ այդ ՍԵՐԸ, ԱՐՑԱՆ շիթերն ու ԾՆՈՐՀԱՑ ծավալումը հասան մինչև աշխարհի հյուսիսային կողմերը, հայերիցին հեթանոսական անույշը, ի փոխան որի բարձրացավ ու հաստատվեց հավիտենական Հուրն ու Լույսը՝ Հիսուս Քրիստոս։ Այս Սքանչացումը վիճակվեց նկն Հայաստան աշխարհիս՝ Թադեոս և Բարթողիմեոս երկու ընտրյալ ու սրբազան առաքյալների ճառատակության գնով, որ և ժամանակներ հետո «զնոցին սրբոց առաքելոց զկարգի պաշտամանն պակասութիւն՝ ելից մեծն Գրիգորիոս՝ ճշմարիտ խոստովանողն Քրիստոսի և Լուսաւորիչն ազ-

գիս մերոյ, որ և զպակասութիւն չարչարանաց Միածնին ելից ի մարմնի իւրում բազմաչարչար ճաճանակութեամբն և քրտնաջան բազմամեայ քարոզութեամբ»։ Առաքյալների ու Մեծն Սուրբի ընդխառնված ոտնաձեռքերի ձայնը և հոգու տրոփյունը ծնունդ տվեց Հայաստանյայց Եկեղեցի զավակին, որ Իր ճայրերի կանչը ուղիղ կերպով փոխանցեց ու ավանդեց սերունդներին։ Հայոց երկրում սերմանվեց Տիրոջ ճունդը, որ և Իր իակ ճրագայտ էջքի օծումով ճաստատվեց ու ամրապնդվեց որպես պարիսպ ճավատոր և սուր՝ ընդդեմ բոնության չարյաց։ Սակայն այսօր կարծես թե դատարկվել ու թափուր էր մնացել Աթոռն Հայաստանյայց. չկար այլևս Առաքելաճաջորդ Հայոց 130-րդ Գահակալը՝ Վազգեն Վեհափառը, և այրիացած Գահը սպասում էր ի նոր տիրոջը։

1995 թ. ապրիլ 9։ Հայաստանյայց Եկեղեցու Տոնացույցը մեր առջև պատկերասիրում է այն իրողությունը, երբ աշխարհի Տերն ու Թագավորը խոնարհության գերագույն օրինակով «ճատեալ ի յէջ և յաւանակ», փառաճաղեանով մուտք է գործում Երուսաղեմ և «ծերքն ոստովք ձիթենեաւք և տղայք ոստովք արմաւենեաւք. և երամ երամ դատուքն աղաղակէին. ՕՍԱՆՆԱ, ՕՐՀՆԵԱԼ ԵԿԵԱԼ Ի ՅԱՆՈՒՆՆ ՏԵԱՌՆ»։

Ծաղկազարդի այս օրը կրկին էր ուրախությունը մեզ ճամար, քանզի Ծաղկազարդով Հայաստանյայց Եկեղեցին Ծաղկազարդվեց, Սուրբ Էջմիածնի զանգակները, միաձուլված ժողովրդի սրտի աղաղակներին, ավետում էին նոր Հայրապետի մուտքը Մայր Աթոռ. «Ողջամբն, Օրհնեալ եկեալ ի յանուն Տեառն»։ Նորընտիր Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, առընթերակայությամբ Երուսաղեմի և Կ. Պոլսո Սրբազան Պատրիարքների, «յօրինակ Մովսիսի», ամպռոլանու պահպանության ներքո առաջնորդում էր իր ժողովրդին դեպի Նոր Երուսաղեմ՝ Սուրբ Էջմիածնի Մայր տաճար, որտեղ պիտի «յօրինակ Տեառն Յիսուսի Քրիստոսի» ճրչակվեր «Եպիսկոպոսապետ Սրբոյ Կաթողիկէ Եկեղեցւոյ՝ արթուն վերադիտող և քարոզ ճշմարտութեան ողղափառ ճաւատոյ»։

Վեհափառի բայերթը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Գահից դեպի Ս. Էջմիածին ճորովի վերարծարծումն էր Տերունական «ճատեալ ի յէջ և յաւանակ» ամճասանելի խորճրդի։ Այս իմաստով ևս Հայաստանյայց Եկեղեցին Ծաղկազարդվեց, որ Հարության ճաղթական և կենդանացնող շնչով առնցում պիտի արժանանա «Նոր Հոգեգալուստի», Պայծառակերպված ու Վարդավառված Վերափոխման սրբազան ու առաքելաճիմն երկնաշավղով խոնարճաբար վայելչությամբ պիտի կրի Տիրոջ արյամբ գնված Ի՛ր Սուրբ Խաչը, ճաղորդվելու ճամար Բեթղեճեմի խոնարճ մսուրի Սրբազնասուրբ Ծննդյանը և Հորդանանի փրփրածուփ ալիքներում Տիրոջ Հոգեվկա Մկրտությանը։

Հրճթաց պատարագի Վեհափառն ընթերցում է իր ուխտագիրը, ըստ որի խոստացավ և ուխտեց «Բարձրելոյն առաջնորդել զազգս Հայոց ըստ ողղափառ վարդապետութեան Քրիստոսական կրօնից, ըստ մերոյս Եկեղեցւոյ դաստութեան և ըստ Հայրապետական կարգաց ու կանոնաց Աստուածպաշտութեան, անտերիր և անխոտոր ընթացեալով յամենայնի ընդլուսաբանիլ ճետս զնացից արժանաժառանգ յաջորդաց Սրբոց Առաքելոցն Թադէոսի և Բարթողիմէոսի և Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Երկրորդ Լուսաւորչի զգաւշաւոր պարապմունքեամբ. Մայր Աթոռոյդ Հայաստանեայցս»։ Ուխտագրի ընթերցումից ճետո Հայաստանյայց Եկեղեցու տասներկու եպիսկոպոսների «զճետս իւրեանց եդեալ ի վերայ գլխոյ Ընտրելոյն» և որպես

Գանձակաբերյան զբաղարանի հանդիսավոր թափոր

Քույր Եկեղեցու մերկայացուցիչները գահակալության դատարանի բնթացքում

աղոթք ու մաղթանք ասացին, «Մեք դնեմք ձեռս ի վերայ, և ամենեքեան աղօթս արարէ՛ք զի արժանաւոր լիցի սա գիշխանութիւն Առաքելական Աթոռոյս անարատ պահել առաջի Աստուծոյ»։ Ապա որպես Ամենայն Հայոց Հայրապետ, Վեհափառն անդրանիկ պատգամը տվեց իր հավատացյալ հոտին։

Արժան է հիշատակել, որ սրբազան պատարագի ընթացքին Հայ Եկեղեցու հետ մեկ Տիրոջ ու դավանանքի հաղորդություն ունենալու միասնականության ոգուն վերանորոգեցին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների Հովվապետները, որպես Քրիստոսավանդ պատգամների ուղղափառ հետևողներ ու ջատագովներ։

Սուրբ պատարագին և գահակալության արարողությանը ներկա էր նաև ՀՀ Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն իր ողջ ավագանիով, ներկա էին նաև քույր Եկեղեցիների Հայրապետներ ու ներկայացուցիչներ, ովքեր հայ հավատացյալի հետ, իբրև մեկ սիրտ ու մեկ հոգի, աղոթում էին Ամենակարող Աստծուն՝ ասելով. «Եւ արդ աղաչեմք զքեզ, Տէ՛ր բարերար, ընկալ զպաղատանս մեր ամենեցուն՝ ժողովելոցս ի տաճարի փառաց անուանդ Քո ...Տո՛ւր սմա զառաքելական և զհայրապետական շնորհս, զօրացո՛ զսա ի գործս բարիս, կալ առաջի քո անարատ վարուք և անանայթաք գնացիք յամենայն ճանապարհս արդարութեան՝ ըստ կամաց Քոց սրբոց և բարեխիրաց, զի արժանի լիցի յաւիտենական կենացն՝ ընդ ամենայն սուրբս Քո»։ Ամեն։